

**ԳԻՐ ՆԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ՝ ՄԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍԵԱՆ
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

Նամայն հայրության հոգևոր կենտրոն լուսայ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօր սրբի Նայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատր գաւակից:

Մեծարգոյ պրն. Սարգսեան,

Չորս ու կէս փասնամեակ Դուք նախանձախնդրօրէն ծառայում էք հայագիտության զարգացման նուիրական գործին՝ ի սպաս բերելով Ձեր կարողությունները, ժամանակն ու անխոնջ ջանքերը: Ձեր գրչին են պատկանում շուրջ հարիւր գիտական աշխատություններ, ուսումնասիրություններ ու յօդուածներ, որոնք բարձրօրէն գնահատուած են մասնագէտների ու ընթերցողների լայն շրջանակների կողմից:

Մեր ժողովուրդը Ձեզ ճանաչում է նաև Ձեր հեղինակային հետուստահադորդումներով, որոնց միջոցով երկար փարիներ հետեռողականօրէն զօրացրել էք հայորդեաց սէրը մայրենի մեր լեզուի, մեր մշակոյթի ու ազգային ժառանգութեան հանդէպ:

Նոյն պահանջկոտութեամբ Դուք իրականացրել էք նաև արդիւնատր մանկավարժական գործունէութիւն՝ պաշտօնավարելով Կիպրոսի Մելքոնեան և Երուսաղէմի ժառանգատրաց վարժարաններում՝ ջանքեր բերելով հայ պատանիների ու երիտասարդների կրթութեան շնորհակալ գործին:

Բարձր գնահատելով Ձեր երկարամեայ ծառայությունները մեր ժողովրդին, սիրով ընդառաջ ԱՄՆ Նայոց Արևմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրպրեանի խնդրանքին, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Ն Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ պարգևի Ձեզ քաջատող արեւշարություն, սրելծագործական նոր աւիւն ու կորով, որպէսզի Դուք շարունա-

կէք Ձեր նպաստը բերել հայ դպրութեանն ու գիտութեանը և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւարատը ժողովրդին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ և ընդ ամենեւեան,
ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ**

Տոաւ Կոնդակս ի 17-ն Յունիս
յամի Տեառն 2013 և ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 729